ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1.

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

31 օգոստոսի 2019թ.

Նախագահ Կ.Հ. Հովսեփյան

Քարտուղար Ք.Վ.Օթարյան

Ներկա էին խորհրդի անդամները:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի քննարկում և հաստատում:

/զեկ. Կ. Հ. Հովսեփյան/

2. Ֆակուլտետի աշխատանքային պլանի (ըստ 2016- 2020թթ. ռազմավարական ծրագրի) և գիտական խորհրդի նիստերի պլան-ժամանակացույցի(2019-20 ուս. տարի) քննարկում և հաստատում:

/զեկ. Կ. Հ. Հովսեփյան/

3. Ուսումնական գործընթացի կազմակերպում:

/զեկ. Կ. Հ. Հովսեփյան/

4. 2019-20թթ. ուստարվա I կիսամյակի դասացուցակների հաստատում:

/զեկ. Կ. Հ. Հովսեփյան/

5. Ֆակուլտետի 2019-2020 ուս. տարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակների հավակնորդ ուսանողների թեկնածության քննարկում:

/զեկ. Կ. Հ. Հովսեփյան/

Ֆակուլտետի գիտխորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Կ. Հ. Հովսեփյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում է Կ.Հ.Հովսեփյանը:

1. ***ԼՍԵՑԻՆ – Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի քննարկում և հաստատում:***

Կ.Հ. Հովսեփյանը ներկայացրեց, որ ֆակուլտետի գիտական խորհրդի կազմը անհրաժեշտ է նորացնել, քանի որ գիտական խորհրդի նախագահ ֆակուլտետի դեկանի ԺՊ, ֆ.մ.գ.թ., դոցենտ, Մանվել Աշոտի Զաքարյանին փոխարինում է դեկանի ԺՊ, ֆ.մ.գ.թ., դոցենտ, Կարեն Հայկի Հովսեփյանը, քարտուղար Հռիփսիմե Սերյոժայի Գասպարյանին փոխարինում է Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս Քնար Վլադիմիրի Օթարյանը, Ֆակուլտետի ՈՒԳԸ նախկին նախագահ Աղավնի Օրդինյանին փոխարինում է ԻԿՄ երրորդ կուրսի ուսանող, ՈՒԳԸ նախագահ Արայիկ Շահնազարյանը:

Գիտխորհրդի նախագահը ներկայացրեց գիտխորհրդի նոր կազմը.

1) Գիտխորհրդի նախագահ - Կարեն Հայկի Հովսեփյան, ֆ.մ.գ.թ., դոցենտ, դեկանի ԺՊ,

2) Քարտուղար- Քնար Վլադիմիրի Օթարյան, «Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների» ամբիոնի դասխոս,

3) Ցուցուլյան Արտակ Վոլոդյայի, ֆ.մ.գ.թ., դոցենտ, մեթոդ խորհրդի նախագահ,

4) Գուլակյան Գեղամ Վոլոդյայի, դասախոս, արհմիության նախագահ ,

5) Հովակիմյան Աննա Սեդրակի, «Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների» տեխ.գ.թ., դոցենտ,ամբիոնի վարիչի ԺՊ,

6) Սիմոնյան Գևորգ Սարգսի, ք.գ.թ., դոցենտ, «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի վարիչի ԺՊ,

7) Աթոյան Միհեր Սերգեյի- «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի ֆ.մ.գ.թ., դոցենտ

8) Հակոբյան Արթուր Պայքարի, «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի» դասախոս

9) Թիրաբյան Մարսպետ Պարգևի Իջևանի թիվ 1 հիմնական դպրոցի ինֆորմատիկայի ուսուցիչ,

10) Ներսիսյան Լիանա Մելիքի ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ, 3-րդ կուրսի ուսանողուհի

11) Արայիկ Գառնիկի Շահնազարյան, ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախագահ, 3-րդ կուրսի ուսանող

12) Քոչարյան Դիանա Գագիկի , Քարտեզագրության և կադաստրային գործ մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի,

13) Հակոբյան Գենյա Ֆլոբերի,Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ներկայացնել տնօրինություն հաստատելու 2019-20 ուստարվա գիտխորհրդի կազմը:

2.***ԼՍԵՑԻՆ - 2019-20թթ. գիտխորհրդի աշխատանքային պլանի հաստատում:***

Օրակարգի երկրորդ հարցի մասին զեկուցումով հանդես եկավ Կ.Հ. Հովսեփյանը: Նա ներկայացրեց 2019-20 ուստարվա գիտխորհրդի աշխատանքային պլանը /կցվում է արձանագրության տեքստին/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա. Ս. Հովակիմյանը, Գ.Ս.Սիմոնյանը նշեցին, որ ֆակուլտետի գիտխորհրդի աշխատանքային պլանը կազմվել է ուսումնական գործընթացի ժամանակացույցին համապատասխան և առաջարկեցին ներկայացնել հաստատման: Ընդհանուր քննարկումից հետո առաջարկեցին հաստատել 2019-20 ուստարվա գիտխորհրդի աշխատանքային պլանը:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ներկայացնել տնօրինություն հաստատելու 2019-20 ուստարվա գիտխորհրդի աշխատանքային պլանը:

3. **ԼՍԵՑԻՆ-**2019-20 ուստարվա ուսումնական գործընթացի կազմակերպում:

Օրակարգի երրորդ հարցի շուրջը հանդես եկավ ֆակուլտետի գիտխորհրդի նախագահ Կ. Հովսեփյանը, ներկայացրեց I կիսամյակի ժամանակացույցը, ներֆակուլտետային գործընթացի կազմակերպան հետ կապված ընթացիկ հանձնարարականները՝ ընդգծելով, որ ֆակուլտետում անհրաժեշտ է պահպանել ուսումնական գործընթացի պահանջներին համապատասխան կարգ:

4. **ԼՍԵՑԻՆ -**2019-20թթ. ուստարվա I կիսամյակի դասացուցակների հաստատում:

Օրակարգի երրորդ հարցի շուրջը հանդես եկավ ֆակուլտետի գիտխորհրդի նախագահ Կ. Հովսեփյանը, ներկայացրեց I կիսամյակի դասացուցակները ըստ մասնագիտությունների: Դասացուցակը կազմվել է երկշաբաթյա/համարիչ և հայտարար/ գրաֆիկով, ըստ ամբիոնային ուսումնական ծանրաբեռնվածության պլանների:

Դասախոսների պահանջարկ չկա, ըստ դասաժամերի բաշխվել են բոլոր առարկաները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի վարիչի ԺՊ, ք.գ.թ., դոցենտ Գ.Ս.Սիմոնյանը նշեց, որ դասացուցակը կազմվել է ուսումնական պլանին համապատասխան: Այնուհետև ելույթ ունեցան Գ.Վ.Գուլակյանը և ուրիշներ: Ներկաները համակարծիք էին ներկայացված դասացուցակին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ներկայացնել տնօրինություն հաստատելու 2019-2020 ուս. տարվա առաջին կիսամյակի դասացուցակը:

5. ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետի 2019-2020 ուս. տարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակների հավակնորդ ուսանողների թեկնածության քննարկում:

Կ.Հ.Հովսեփյանը ներկայացրեց, որ «Աշխարհագրություն» մասնագիտության «Քարտեզագրություն և կադաստրային գործ» բակալավրի կրթական ծրագրի անվճար ուսուցման համակարգի երրորդ կուրսի ուսանող Տիգրան Սերյոժայի Գասպարյանը չորս կիսամյակ, իսկ Բնական գիտությունների ֆակուլտետի «Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)» մասնագիտության Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» բակալավրի կրթական ծրագրի անվճար ուսուցման համակարգի չորրորդ կուրսի ուսանող Գերասիմ Սամվելի Ալավերդյանը վեց կիսամյակ անընդմեջ սովորում են գերազանց:

Կ.Հ.Հովսեփյանը առաջարկեց Տիգրան Գասպարյանին ներկայացնել «ՎԱՉԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ» անվանական կրթաթոշակի, իսկ Գերասիմ Ալավերդյանին «ՀԱՄԼԵՏ ԿԱՐԱՅԱՆ» անվանական կրթաթոշակի:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի վարիչի ԺՊ, ք.գ.թ., դոցենտ Գ.Սիմոնյանը ներկայացրեց, որ Տիգրան Գասպարյանը չորս կիսամյակների ընթացքում բոլոր առարկաներից ստացել է միայն գերազանց

գնահատականներ, պարտաճանաչ, պատասխանատու ուսանող է, գտնում է, որ արժանի է «ՎԱՉԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ» անվանական կրթաթոշակ ստանալուն:

«Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների» ամբիոնի վարիչի ԺՊ, տեխ.գ.թ., դոցենտ, կրթական ծրագրի ղեկավար Ա.Հովակիմյանը ներկայացրեց, որ Գերասիմ Ալավերդյանը աշխատասեր, ակտիվ, պատասխանատու ուսանող է, գտնում է, որ արժանի է «ՀԱՄԼԵՏ ԿԱՐԱՅԱՆ» անվանական կրթաթոշակ ստանալուն:

Որոշեցին - Երաշխավորել «ՎԱՉԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ» անվանական կրթաթոշակ նշանակել Տիգրան Գասպարյանին, «ՀԱՄԼԵՏ ԿԱՐԱՅԱՆ» անվանական կրթաթոշակ նշանակել Գերասիմ Ալավերդյանին և ներկայացնել մասնաճյուղի գիտական խորհրդի հաստատմանը:

ՆԱԽԱԳԱՀ **Կ.Հ.Հովսեփյան**

ՔԱՐՏՈՒՂԱՐ **Ք.Վ.Օթարյան**